

Արագածոտնի մարզպետը հանդիպել է ԼՂՀ նախագահի, վարչապետի եւ պաշտպանության նախարարության շտաբային կազմի հետ

Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի նախաձեռնությամբ սեպտեմբերի երկօրյա այցելություն է կազմակերպվել ԼՂՀ պաշտպանության բանակում Արագածոտնի մարզից ծառայող զինվորներին: Խումբը ղեկավարում է մարզպետ Սարգիս Սահակյանը:

Սեպտեմբերի 11-ին կայացել է Սարգիս Սահակյանի հանդիպումը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ: Հանդիպման ընթացքում Արցախի նախագահը եւ Արագածոտնի մարզպետը զրուցել են այցելության հետ կապված մանրամասների շուրջ, քննարկվել են համատեղ իրականացվելիք ծրագրեր: Բակո Սահակյանը կարելորել է, որ նման այցելությունները նպաստում են բանակ-ընտանիք կապի ամրապնդմանը: Իսկ զինվորների մոտ առավել է դրսևորվում ծառայության հանդեպ պատասխանատվության զգացումը:

Մարզպետ Սարգիս Սահակյանը հանդիպում է ունեցել նաեւ ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի հետ: Մարզպետը վարչապետի հետ քննարկել է ինչպես արդեն ավանդական դարձած իրենց այցելություններին, այնպես էլ Հադրութի շրջանի հետ Արագածոտնի մարզի համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերին վերաբերող հարցեր:

Կայացել է նաեւ Սարգիս Սահակյանի եւ ԼՂՀ ՊՆ շտաբային կազմի հանդիպումը: Կողմերը կարելորել են զինծառայողների եւ նրանց հարազատների հանդիպման այս ձեւաչափը եւ պայմանավորվածություն է ձեռք բերվել դրանք հետագայում շարունակելու վերաբերյալ: